ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/179

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար թվով 4 ստորգետնյա հետիոտնային անցումների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10995-2020 գրությամբ «Սարգիս և

Մարիաննա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 15.07.2020թ.-ի թիվ 01/61-12335 գրության հիման վրա, 22.07.2020թ.-ին «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 22.07.2020թ.-ին:

22.07.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/179 համարի ծածկագիրը:

30.07.2020թ.-ին, 06.08.2020թ.-ին և 12.08.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 06.08.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.08.2020թ.-ին:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 15.07.2020թ.-ի թիվ 01/61-12335 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ ընկերություն) միջև 24.03.2020 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի ստորգետնյա հետիոտնային անցումների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի

մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի N 1 հավելվածով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ, որը ավարտվում է 23.05.2020 թվականին, սակայն ընկերության կողմից սահմանված ժամկետում պայմանագրով ստանձնած պարտավորությունները չեն կատարվել:

Պայմանագրի 8.15 կետով սահմանված պայմանագրով նախատեսված պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները «օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնող Երևան քաղաքապետարանի աշխատակազմի շինանարարության և բարեկարգման վարչությունը 26.05.2020 թվականի հ. 16/8534 և 02.06.2020 թվականի հ. 16/8889 գրություններով դիմել է ընկերությանը տեխնիկական բնութագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները ներկայացնելու համար, սակայն համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Վերը նշված պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը:Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքների կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված գնման աշխատանքների պայմանագրից՝ համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Կից տրամադրվում է վերը նշված պայմանագիրը մասնակի լուծելու վերաբերյալ հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերի պատճենները:»:

3. <u>«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 22.07.2020թ.-ին գրությամբ դիմել է «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10995-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 24.03.2020թ. կնքվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21-1» ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետև նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն ստանձնում է Երևան քաղաքի ստորգետնյա հետիոտնային անցումների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն

նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայամանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Պայմանագրի N 1 հավելվածով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ, որը ավարտվում է 23.05.2020թ.:

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 11.05.2020թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21-1» ծածկագրով գնման պայմանագով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները ընթանում են նորմալ հունով: Կատարվել են անհրաժեշտ չափագրման աշխատանքները, այս պահին իրականացվում են տեխնիկական վիճակի մասին եզրակացության ձեռքբերման աշխատանքները: Սակայն վերոնշյալ պայմանագրի ուժի մեջ մտնելուց ի վեր մեր երկիրը գտնվել է արտակարգ դրության պայմաններում և սկզբնական շրջանում պարետի կողմից արգելված է եղել վերոնշյալ աշխատանքների իրականացումը և նախագծային գործընթացներն առհասարակ: Ուստի խնդրում եմ մեր պայմանագրային աշխատանքների ժամկետը երկարաձգել 60 օրացույցային օրով:

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 15.05.2020թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել հետևյալը.

«Հայտնում եմ, որ ս.թ. մայիսի 11-ին դիմել էինք Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչություն «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21-1» ծածկագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ժամկետը 60 օրացույցային օրով երկարաձգելու հարցով:

Հաշվի առնելով, որ առ այս պահը չունենք պատասխան, և այն, որ Ֆորս-մաժորային իրավիճակ է ՀՀ-ում, ուստի դիմում եմ և հայցում Ձեր համաձայնությունը Պայմանագրի լուծման համար առանց կողմերի համար հետագա իրավական պարտավորությունների առաջացման, հիմք ընդունելով Պայմանագրի 6 կետը, այն է՝ սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:»

Երևանի քաղաքապետարանը 18.05.2020թ. թիվ 61/46120հ գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալ.

«Կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետով և պայմանագրի 7.8 կետով պայմանգրի ժամկետը չի կարող երկարաձգվել 60 օրացուցային օրով: Միաժամանակ՝ պայմանագրի 6-րդ կետով սահմանված է, որ սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Համաձայն www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված պայմանգիրը միակողմանի լուծելու մասին 08.07.2020թ. ծանուցման՝ «Երևանի քաղաքապետարանի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 24.03.2020թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21-1» ծածկագրով գնման պայմանագիր 2.1.3 կետի բ) ենթակետի պահանջները հիմք ընդունելով՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված գնման աշխատանքների պայմանագրից՝ համարելով այն լուծված:»

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության

հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետնաև՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքի վրա՝

Պայմանագրի 2.1.3 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Ինչպես արդեն նշել ենք, Երևանի քաղաքապետարանի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 24.03.2020թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21-1» ծածկագրով գնման Պայմանագրի N 1 հավելվածով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ, որը ավարտվում է 23.05.2020թ.:

«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն 11.05.2020թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել հետևյալը. «Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21-1» ծածկագրով գնման պայմանագով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները ընթանում են նորմալ հունով: Կատարվել են անհրաժեշտ չափագրման աշխատանքները, այս պահին իրականացվում են տեխնիկական վիճակի մասին եզրակացության ձեռքբերման աշխատանքները: Սակայն վերոնշյալ պայմանագրի ուժի մեջ մտնելուց ի վեր մեր երկիրը գտնվել է արտակարգ դրության պայմաններում և սկզբնական շրջանում պարետի կողմից արգելված է եղել վերոնշյալ աշխատանքների իրականացումը և նախագծային գործընթացներն առհասարակ: Ուստի խնդրում եմ մեր պայմանագրային աշխատանքների ժամկետը երկարաձգել 60 օրացույցային օրով:

Երևանի քաղաքապետարանը 18.05.2020թ. թիվ 61/46120հ գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալ.

«Կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետով և պայմանագրի 7.8 կետով պայմանգրի ժամկետը չի կարող երկարաձգվել 60 օրացուցային օրով: Միաժամանակ՝ պայամանագրի 6-րդ կետով սահմանված է, որ սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Որից հետո gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է պայմանգիրը միակողմանի լուծելու մասին 08.07.2020թ. ծանուցում, որի համաձայն՝

«Երևանի քաղաքապետարանի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 24.03.2020թ. կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21-1» ծածկագրով գնման պայմանագիր 2.1.3 կետի բ) ենթակետի պահանջները հիմք ընդունելով՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված գնման աշխատանքների պայմանագրից՝ համարելով այն լուծված:»

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ տվյալ դեպքում Պայմանագրի լուծման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Մասնավորապես.

ՀՀ կառավարության կողմից 2020թ. մարտի 16-ին ընդունվել է թիվ 298-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին: Վերոհիշյալ որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով հայտարարվել է արտակարգ դրություն, որը երկարաձգվել է մինչև 2020թ. մայիսի 14-ը, այնուհետև համապատասխան որոշումներով այն երկարաձգվել նաև մինչև հուլիսի 14-ը, որի պարագայում երկրում ստեղծվել էր մի իրավիճակ, որ պարետի կողմից արգելված է եղել վերոնշյալ աշխատանքների իրականացումը և նախագծային գործընթացներն առհասարակ (տես՝ ՀՀ պարետի 2020թ. մարտի 16-ին ընդունված թիվ 298-Ն որոշումը):

Պայամանագրի 6-րդ կետը սահմանում է, որ սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Ուստի՝ գտնում ենք, որ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով Պայմանգրի լուծման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն, քանի որ ՀՀ պարետի որոշման պայմաններում ՍՊԸ-ն չէր կարող իրականացնել այնպիսի աշխատանքներ, որոնք այդ ժամանակահատվածում արգելված էին, և համապատասխանաբար սահմանված 60-օրյա ժամկետում պարտավորությունները չէին կարող ավարտվել: Հենց այս հիմքով «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն դիմել էր պատվիրատուին՝ առաջարկելով երկարացնել պայմանագրի կատարման ժամկետը:

Բացի այդ, բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն, օգտվելով Պայմանագրի 6-րդ կետով սահմանված պահանջներից՝ առաջարկել է Երևանի քաղաքապետարանին այդ կետի ուժով և դրա հիման վրա լուծել պայմանագիրը:

Մինչդեռ Երևանի քաղաքապետարանը 18.05.2020թ. թիվ 61/46120հ գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից արված առաջարկության վերաբերյալ հստակ դիրքորոշում չեն ներկայացրել, այլ ընդամենը հայտնել է հետևյալ. «Կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետով և պայմանագրի 7.8 կետով պայմանգրի ժամկետը չի կարող երկարաձգվել 60 օրացուցային օրով: Միաժամանակ՝ պայամանագրի 6-րդ կետով սահմանված է, որ սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Երևանի քաղաքապետարանի վերոհիշյալ հայտնած դիրքորոշումից, ըստ էության, պետք է հետևեր Պայմանագրի լուծումը՝ Պայմանագրի 6-րդ կետի ուժով, սակայն «Սարգիս

և Մարիաննա» ՍՊԸ-ի համար անսպասելիորեն Պատվիրատուն Պայմանագիրը լուծել է 2.1.3 կետի բ) ենթակետի պահանջները հիմք ընդունելով:»:

Վերոգրյալը հաշվառմամբ, Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության 22.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10995-2020 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը մերժել:

4. <u>ՍՑ-LO-2020/179 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

I. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 24.03.2020թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

II. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի ստորգետնյա հետիոտնային անցումների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

III. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

IV. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը, կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում 60-րդ օրացուցային օրը ներառյալ:

V. Մասնակիցը 11.05.2020թ.-ին Պատվիրատուն ուղղված թիվ ՍՄ-20/36 գրությամբ հայտնել է, որ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21-1» ծածկագրով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները ընթանում են նորմալ հունով: Կատարվել է անհրաժեշտ չափագրման աշխատանքները, իսկ այս պահին իրականացվում

է տեխնիկական վիճակի մասին եզրակացության ձեռքբերման աշխատանքները: Սակայն վերոնշյալ պայմանագրի ուժի մեջ մտնելուց ի վեր Հայաստանի Հանրապետությունը գտնվել է արտակարգ դրության պայմաններում և սկզբնական շրջանում պարետի կողմից արգելված է եղել վերոնշյալ աշխատանքների իրականացումը՝ նախագծային գործընթացներն առհասարակ, ուստի խնդրել է պայմանագրով նախատեսված աշխատանքների ժամկետը երկարաձգել 60 օրացուցային օրով:

VI. Երևանի քաղաքապետարանը, ի պատասխան Մասնակցի վերոնշյալ գրության, 18.05.2020թ.-ին թիվ 61/46120 գրությամբ հայտնել է, որ գրությամբ բարձրացված առաջարկը կարգավորվում է ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 56-րդ կետի 4-րդ և Պայմանագրի 7.8-րդ կետով, ուստի պայմանագրի ժամկետը չի կարող երկարաձգվել 60 օրացուցային օրով:

Պատվիրատուն միաժամանակ հայտնել է, որ պայմանագրի 6-րդ կետով սահմանված է, որ սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

VII. Մասնակցին ուղարկված 26.05.2020թ.-ին թիվ 8534 և 02.06.2020թ.-ի թիվ 16/8889 գրություններով Պատվիրատուն հայտնել է, որ Երևանի քաղաքի կարիքների համար Երևանի քաղաքապետարանի հետ Մասնակցի կողմից կնքված պայմանագրերի հիման վրա պետք է իրականացվեին «Թվով երկու «Ազատություն-Դավիթ Անհաղթ խաչմերուկի» և «Գր. Լուսավորիչ-Մաշտոց խաչմերուկի» ստորգետնյա անցումներ»-ի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման աշխատանքները: Հաշվի առնելով, որ Մասնակցի կողմից խախտվել են վերոնշյալ աշխատանքների կատարման ժամկետները, հանձնարարվում է 2-օրյա ժամկետում ապահովել պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը, հակառակ դեպքում համաձայն կապալի պայմանագրով սահմանված 3.1.4-րդ կետի՝ կնքված պայմանագիրը միակողմանի կլուծվի:

VIII. Պատվիրատուն 15.06.2020թ.-ին թիվ 9938 գրությամբ դիմելով «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին հայտնել է, որ Երևան քաղաքի կարիքների համար Երևանի քաղաքապետարանի հետ Ձեր ընկերության կողմից կնքված և չկատարված

պայմանագրային պարտավորությունների «Թվով երկու «Ազատություն-Դավիթ Անհաղթ փողոցների խաչմերուկի» և «Գր.Լուսավորիչ-Մաշտոց խաչմերուկի» ստորգետնյա անցումների» (պայմանագիր հ. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21) նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման աշխատանքներն ամբողջական ավարտուն տեսքի բերելու համար, Մասնակցին տրվում է վերջին հնարավորությունը նշելու նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման աշխատանքներն ամբողջական ավարտուն տեսքով ներկայացնելու վերջին ժամկետը:

IX. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 10.07.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 01/61-11831 ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 24.03.2020թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21-1» ծածկագրով գնման պետական գնման պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից 08.07.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքների կատարման ժամկետը):

X. Պատվիրատուն Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը 10.07.2020թ.-ին ուղարկել է Մասնակցի sargismarianna@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10995-2020 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ

իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի ստորգետնյա հետիոտնային անցումների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ

նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 24.03.2020թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի ստորգետնյա հետիոտնային անցումների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների, իսկ պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը, կատարման նախընտրելի ժամկետ է սահմանվում 60-րդ օրացուցային օրը ներառյալ:

Մասնակիցը 11.05.2020թ.-ին Պատվիրատուն ուղղված թիվ ՍՄ-20/36 գրությամբ հայտնել է, որ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21-1» ծածկագրով նախատեսված նախագծանախա-հաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները ընթանում են նորմալ հունով: Կատարվել է անհրաժեշտ չափագրման աշխատանքները, իսկի այս պահին իրականացվում է տեխնիկական վիճակի մասին եզրակացության ձեռքբերման աշխատանքները: Սակայն վերոնշյալ պայմանագրի ուժի մեջ մտնելուց ի վեր Հայաստանի Հանրապետությունը գտնվել է արտակարգ դրության պայմաններում և սկզբնական շրջանում պարետի կողմից արգելված է եղել վերոնշյալ աշխատանքների իրականացումը՝ նախագծային գործընթացներն առհասարակ, ուստի խնդրել է պայմանագրով նախատեսված աշխատանքների ժամկետը երկարաձգել 60 օրացուցային օրով:

Երևանի քաղաքապետարանը, ի պատասխան Մասնակցի վերոնշյալ գրության, 18.05.2020թ.-ին թիվ 61/46120 գրությամբ հայտնել է, որ գրությամբ բարձրացված առաջարկը կարգավորվում է ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ

հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 56-րդ կետի 4-րդ և Պայմանագրի 7.8-րդ կետով, ուստի պայմանագրի ժամկետը չի կարող երկարաձգվել 60 օրացուցային օրով:

Պատվիրատուն միաժամանակ հայտնել է, որ պայմանագրի 6-րդ կետով սահմանված է, որ սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Մասնակցին ուղարկված 26.05.2020թ.-ին թիվ 8534 և 02.06.2020թ.-ի թիվ 16/8889 գրություններով Պատվիրատուն հայտնել է, որ Երևանի քաղաքի կարիքների համար Երևանի քաղաքապետարանի հետ Մասնակցի կողմից կնքված պայմանագրերի հիման վրա պետք է իրականացվեին «Թվով երկու «Ազատություն-Դավիթ Անհաղթ խաչմերուկի» և «Գր. Լուսավորիչ-Մաշտոց խաչմերուկի» ստորգետնյա անցումներ»-ի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման աշխատանքները: Հաշվի առնելով, որ Մասնակցի կողմից խախտվել են վերոնշյալ աշխատանքների կատարման ժամկետները, հանձնարարվում է 2-օրյա ժամկետում ապահովել պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը, հակառակ դեպքում համաձայն կապալի պայմանագրով սահմանված 3.1.4-րդ կետի՝ կնքված պայմանագիրը միակողմանի կլուծվի:

Պատվիրատուն 15.06.2020թ.-ին թիվ 9938 գրությամբ դիմելով «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին հայտնել է, որ Երևան քաղաքի կարիքների համար Երևանի քաղաքապետարանի հետ Ձեր ընկերության կողմից կնքված և չկատարված պայմանագրային պարտավորությունների «Թվով երկու «Ազատություն-Դավիթ Անհաղթ փողոցների խաչմերուկի» և «Գր.Լուսավորիչ-Մաշտոց խաչմերուկի» ստորգետնյա անցումների» {պայմանագիր հ.ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21) նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման աշխատանքներն ամբողջական ավարտուն տեսքի բերելու համար, Մասնակցին տրվում է վերջին հնարավորությունը նշելու նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման աշխատանքներն ամբողջական ավարտուն տեսքով ներկայացնելու վերջին ժամկետը:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 10.07.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 01/61-11831 ծանուցման համաձայն՝ Երևանի

քաղաքապետարանի և «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի միջև 24.03.2020թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/21-1» ծածկագրով գնման պետական գնման պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից 08.07.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքների կատարման ժամկետը):

Պատվիրատուն Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը 10.07.2020թ.-ին ուղարկել է Մասնակցի sargismarianna@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 08.07.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 10.07.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը՝ միաժամանակ նույն ծանուցումը ուղարկելով Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեին:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված աշխատանքները չեն կատարվել վերջինիս կողմից դրսևորած անգործության արդյունքում, իսկ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի հրաժարվել է Մասնակցի հետ կնքված գնման աշխատանքների պայմանագրից՝ համարելով այն լուծված:

Անդրադառնալով Մասնակցի կողմից դիրքորոշմամբ նշված այն դիրքորոշմանը, որ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով Պայմանգրի լուծման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն, քանի որ ՀՀ պարետի որոշման պայմաններում ՍՊԸ-ն չէր կարող իրականացնել այնպիսի աշխատանքներ, որոնք այդ ժամանակահատվածում արգելված էին, և համապատասխանաբար սահմանված 60-օրյա ժամկետում պարտավորությունները չէին կարող ավարտվել, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Պայմանագրի 6-րդ գլխով սահմանվել է, որ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են

պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, **եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Բողոքներ քննող անձը նաև փաստում է, որ Օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ տվյալ դեպքում, ՀՀ կառավարության 16.03.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի օգոստոսի 13-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով արտակարգ դրություն հայտարարելու հանգամանքը օբյեկտիվորեն չէր կարող ազդել Ընկերության ստանձնած պարտավորությունների չկատարման վրա, քանի որ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետից հետո՝ 24.05.2020թ., Պատվիրատուն բազմիցս՝ մի շարք գրություններով դիմել է Մասնակցին՝ հնարավորություն ընձեռելով նշելու նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման աշխատանքներն ամբողջական ավարտուն տեսքով ներկայացնելու վերջին ժամկետը՝ ապահովելու պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Մասնակցի կողմից դիրքորոշմամբ չներկայացվեցին բավարար փաստեր ու հանգամանքներ, որոնց առկայության պարագայում հնարավոր կլիներ հաստատված համարել արտակարգ դրություն հայտարարելու հանգամանքի՝ Ընկերության ստանձնած պարտավորությունների չկատարման վրա օբյեկտիվորեն ազդելու փաստի մասին: Մասնակցի կողմից չներկայացվեց կոնկրետ որևէ գործողություն, որը հաղթահարելը, պայմանավորված արտակարգ դրությամբ, օբյեկտիվորեն եղել է անհնարին՝ կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ Պայմանագրի 7.8 կետով սահմանված աշխատանքի կատարման ժամկետի երկարաձգման պայմանը Պատվիրատուի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը, ինչպես այն սահմանված է՝ աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել

մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պայմանագրով ստանձնած պարտավորությունների դադարեցմանը և պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10995-2020 գրությամբ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/179 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**